ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2023թ. հոկտեմբերի 16-ին, N 423-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԿԱՔԱՎԱՃՈՐԻ Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշման հավելվածի 10-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Արագածոտնի մարզի «Կաքավաճորի Մ. Մխիթարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարել մրցույթ, որը կանցկացվի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2023 թվականի նոյեմբերի 24-ին (հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն N 2):

2. ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնին՝ տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը սահմանված կարգով հրապարակել ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կայք էջում, azdarar.am-ում և հայտարարության տեքստն ուղարկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

3. ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնին՝

1) տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթին մասնակցելու հավակնորդների՝ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը էլեկտրոնային կամ առձեռն տարբերակով ընդունել 2023 թվականի հոկտեմբերի 16-ից նոյեմբերի 3-ը ներառյալ, ժամը՝ 9^{30}–ից մինչև 13^{00}-ը /բացի շաբաթ և կիրակի օրերից/ ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնում,

2) պաշտոնի հավակնորդների փաստաթղթերի փաթեթը սահմանված կարգով հանձնել մասնագիտական հանձնաժողովին:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 10/16/2023 14:29:39 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ